

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0821.01.5 «ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0821.01.01.5 «ՏԵԽՆԻԿ՝ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊՈՒՐԱԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
I. Դերը	Անտառային և անտառապտուրակային տնտեսության տեխնիկը իրականացնում է անտառի օգտագործման, վերարտադրության, պաշտպանության, բնակավայրերի կանաչապատման մասնագիտական գործունեություն:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Անտառների օգտագործման կազմակերպում	
Աշխատանքային գործընթացը	1) անտառապատ հատվածների անտառահատման իրականացում՝ խնամքի նպատակով, 2) հատման արդյունքում առաջացած բնափայտի տեսակավորման, տեղափոխման կազմակերպում և վերահսկում, 3) անտառի կողմնակի օգտագործման աշխատանքների կազմակերպում, 4) անտառային տարածքների ընտրություն կատարում՝ անտառօգտագործման տարբեր ձևերի համար, 5) տեխնոլոգիական քարտի լրացում:
Կատարման չափանիշներ	✓ անտառատումն իրականացված է գործող նորմատիվ փաստաթղթերին համապատասխան, ✓ բնափայտը տեղափոխված է՝ ըստ կարգի, ✓ անտառի կողմնակի օգտագործման աշխատանքները կազմակերպված են ճիշտ, ✓ պահպանված են աշխատանքի անվտանգության նորմերը, ✓ տեխնոլոգիական քարտերը լրացված են՝ ըստ սահմանված կարգի:
Խնդիրների բնագավառ 2. Անտառների վերարտադրության և անտառաբուծության միջոցառումների կազմակերպում ու անցկացում	
Աշխատանքային գործընթացը	1) անտառային սերմնային տնտեսության կազմակերպում, 2) տնկանյութի աճեցման աշխատանքների կազմակերպում, 3) անտառվերականգման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, 4) սերմերը և տնկանյութը վնասատուներից ու հիվանդություններից պաշտպանելու միջոցառումների կազմակերպում, 5) ատառմշակութային աշխատանքների տեխնիկական ընդունման և գույքագրման աշխատանքների իրականացում:
Կատարման չափանիշներ	✓ անտառային սերմնաբուծության աշխատանքներն իրականացվել են ճիշտ, ✓ տնկանյութը և սերմերն ունեն բավարար որակ, ✓ անտառվերականգման և անտառապատման աշխատանքներն իրականացված են նորմերին համապատասխան, ✓ սերմերի և տնկանյութի պահպանությունն իրականացված է ճիշտ, ✓ ատառմշակութային աշխատանքների տեխնիկական ընդունումը և գույքագրումը իրականացված է սահմանված նորմերով:
Խնդիրների բնագավառ 3. Անտառների պաշտպանության միջոցառումների կազմակերպում ու անցկացում	

Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) անտառապաթուղոգիական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրում, 2) սանիտարական հատումների կազմակերպում, 3) անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կազմակերպում, 4) անտառում ապօրինի գործողությունների հայտնաբերում և ահազանգում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ✓ անտառապաթուղոգիական իրավիճակի վերաբերյալ տվյալները հավաքագրվել և ներկայացվել են վերադասին, ✓ սանտարական հատումները նախագծվել և իրականացվել են՝ համապատասխան գործող նորմերին, ✓ անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ միջոցառումները կազմակերպվել են ճիշտ:
Խնդիրների բնագավառ 4. Բնակավայրերի կանաչապատման իրականացում և նախագծերի կազմում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) ընտրում է տեսակաշար՝ ըստ դենդրոլոգիական շրջանացման, 2) նախապատրաստում է ընհանուր կամ հասարակական նշանակության տնկարկների ստեղծման աշխատանքները, 3) ստեղծում է գծային տնկարկներ, երկարատև ծաղկող այգիներ, բուրումնավետ այգիներ և տոպիար արվեստի նմուշներ, 4) իրականացնում է ուղղաձիգ կանաչապատում, ստեղծում է քարապարտեզներ, այլիական այգիներ, սիզամարգեր
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> ✓ բնակավայրերի կանաչապատման նախագծերը կազմված են ճիշտ, ✓ տնկարկների համար տեսակաշարն ընտրված է համապատասխան, հաշվի են առնված բոլոր առանձնակահկությունները, ✓ գծային տնկարկները, երկարատև ծաղկող այգիները, բուրումնավետ այգիները և տոպիար արվեստի նմուշները համապատասխանում են սահմանված նորմերին, ✓ ուղղաձիգ կանաչապատման աշխատանքներն իրականացված են ճիշտ ✓ քարապարտեզներ, այլիական այգիներ, սիզամարգեր ստեղծելու աշխատանքներն իրականացված են ճիշտ:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Պատասխանատու է անտառային և անտառապուրակային տնտեսությունների կազմակերպման, բուսական ու կենդանական աշխարհի պահպանության ու պաշտպանության, անօրինական ծառահատումների, չարտոնված որսի, հրդեհի կանխման, անվտանգության տեխնիկայի կանոններից բխող պահանջների ապահովման և պաշտոնական մյուս պարտավորությունների կատարման համար:</p>
IV. Լեզուները	<ul style="list-style-type: none"> ✓ Հայերեն ✓ ռուսերեն ✓ օտար լեզվի մասնակի իմացություն, հաղորդակցման, մասնագիտական գրականությունից և սարքավորումներից օգտվելու համար:
V. Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> ✓ MS office՝ բավարար ✓ Internet՝ բավարար
VI. Գիտելիքները	<ol style="list-style-type: none"> 1. անտառային և անտառապուրակային տնտեսության վարմանն առնչվող նորմատիվ, օրենսդրական և ենթօրենսդրական ակտեր, 2. անտառային և անտառապուրակային տնտեսությունների աշխատանքների ագրոտեխնիկան, տեխնոլոգիան,

	<p>մեքենայացման միջոցները,</p> <ol style="list-style-type: none"> 3. հողագիտություն, 4. ընդհանուր գեոդեզիա, 5. բուսաբանություն, 6. բույսերի ֆիզիոլոգիա, 7. ծառագիտություն, 8. անտառագիտություն, 9. անտառների պահպանության դրույթները:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<ol style="list-style-type: none"> 1. կազմակերպել և իրականացնել անտառօգտագործման աշխատանքներ՝ ըստ հրահանգի, 2. ստեղծել անտառային մշակույթներ, իրականացնել անտառբարելավման աշխատանքներ՝ ըստ հրահանգի, 3. կազմակերպել և իրականացնել անտառի պաշտպանությանն ուղղված աշխատանքներ՝ ըստ հրահանգի, 4. նախագծել և իրականացնել բնակավայրերի կանաչապատման աշխատանքներ՝ ըստ հրահանգի, 5. բնակչության շրջանում իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ՝ անտառօգտագործման, անտառների պահպանության և անտառվերականգնման վերաբերյալ, 6. պահպանել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության նորմերը և կանոնները, 7. լրացնել և կազմել անհրաժեշտ աշխատանքային փաստաթղթեր, 8. կիրառել գեոինֆորմացիոն տեխնոլոգիաները՝ աշխատանքային խնդիրներ լուծելիս:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Կարգապահություն, պարտաճանաչություն, արագ կողմնորոշվելու և հրահանգները ժամանակին կատարելու կարողություն, անհատական և թիմային աշխատանք կատարելու ունակություն, տեխնոլոգիական նորարարությունների նկատմամբ ընկալունակություն, մարդկանց հետ շփվելու և սթրեսը կառավարելու կարողություն:</p>